

100. ՄԱՐԹԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄԸ ԾՈՆՆ Ա

Մին մարթու կնեգյ սիրական ա ինում պըհելիս։ Մին օր կընեգյը նստ ա տըեռնում սիրըկանեն ասում.—Մինչև հի՞ր պիտի մունք թըքըն-թաքուն շոռ կյանք, սոր ես իմ մարթիս խանփիմ, ասըեմ քյինում ընք իմ հարանց տոն, հղեննի էսհինչ տըեղը շամբուտան կըմուտանաս, ըսպանըես, ընդեղեքյ կըթաղենքյ, տրանա ետը փսակվենքյ, մինչև վերչ բիրանդի կապրենքյ։ Սիրականը թա՝ լանվ։

Տրանա ետն էտ կնեգյը քյինում ա տոն, մարթին ասում.—Ըսկի գյունդում չըս թա հաներ օնրես, յա օնրես վուչ, սարավ տու վրէչ նրա հետն փըեսա յը՞ս։ Մարթը թա՝ քանի հե՞տն յըս ասալ ես քյինանք իմ հարանց տոն, վրեր եկալ չըմ։ Կնեգյը թա՝ դե էն վախտը քըզ նհրետ մին պանհ էլ եր կալ, վրեր բուտաննեն պեննն ընելիս քյամանգյ անրես։

Մարթը քյինում ա պանհը յոր օնում, մնացած տես-տենը հիզբրում, էքյաը քշերավ հղեն յըն ինում, քյինում։ Հղեննի մին խոր ծմակավ վրեր անց ըն կենում, մին շամբ տըեղա մուտանում, կնեգյը մարթին ասում ա.—Նըղացալ ըմ, նատենքյ մխբրեն դինջանանք։ Մարթը թա՝ լանվ, էս փիս տըեղան տոնա կյանք, էն ղոլին կընատենքյ։ Կնեգյը մարթին վիզանն կախ ա ինում, թա՝ չէ՞, վրեր չէ, ես էլ կարում չըմ քյինում, նատե, դինջանանք։ Մարթը նըս-

տում ա, կնեգյն էլ ա նստում։ Էդ դաշրոնը կնգանը սիրականը շամբին քմական տուս ա կյամ, տրան վրեր ա քցում, օղում ա վրեր ըսպանե։ Լիհա խրեգյ ա ինում մնացած, վրեր պկան փռնե խեխտի, տրա շոնը քմական թաքուն կյաղիս ա ինում, կյամ ա կնգանը սիրբկանեն էն փիս-փիս տրղերան փրռնում, խրղեբցնում։ Էտ մարթը ծրեռքեն պանհավը թխում ա, տրա կլոխը լափում անում, իր կենում կնգանեն էլ ըսպանում, ճոխանեն նի ածում շամբը, նա տրեռնում քյինամ սուգումն ասում, վրեր կնեգյրս ուրան սիրբկանեն նհրեա ուզեցալ ա ինձ ըսպանե, շոնքս հրսալ ա, ինձ քյոմագյ ըրալ, ճոխանեն էլ ըսպանալ ըմ, պանհը, վրեր ծրեռքս ըն տուվալ, հանցու ինձ տրղվարեն, ուրանց հետե յա հարկավրեր եկալ։

Սուգումը տրեռնում ըն, վրեր տա դանդ ա ըրալ (հու վրոր էլ ինի, իտի կանե), պեց ըն թողում։